



ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ՝
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Գավառի պետական համալսարանի 23-րդ գիտաժողովը՝ նվիրված Վենետիկի Միխիթարյան Միաբանության Հայր, փիլիսոփա, աստվածաբան, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, բանաստեղծ, բանահավաք Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին, կայացավ 2020 թվականի հուլիսի 5-ին:

Գիտաժողովի նյութերի տպագրման համար անհրաժեշտ է զեկուցումները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը՝ պահպանելով հետևյալ տեխնիկական պահանջները.

1. Գիտական հոդվածը պետք է լինի 5-ից 10 էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ երկու օրինակից, համակարգչային շարվածքով B 5 (17սմ x 24սմ) չափի տպագրական թղթի վրա, «GHEA Grapalat» տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով), էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմանները՝ 1սմ:
2. Վերևում նշել վերնագիրը՝ 10,5 տառաչափով (մեծատառերով, թավ՝ Bold):
3. Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում, նշել հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը (թավ), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել նոր տողից):
4. Մեկ տող ներքև՝ 10,5 pt տառաչափով, տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:
5. Մեկ տող բաց թողնելով՝ 10 pt տառաչափով, շեղատառ (italic) և թավ ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները:

6. Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «Բանալի բառեր» և նշել 7-10 բանալի բառեր:
7. Բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը, վերջում նշելով նաև խմբագրական խորհուրդ ներկայացման և գրախոսման օրը, ամիսը, տարին, օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները:
8. Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերն անհրաժեշտ է հավաքել Microsoft Equation Editor 3.0 ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները (ներկայացնել նկարի տեսքով)՝ 10 տառաչափով, ինչպես նաև հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, ամփոփագիրը, հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը:
9. Անհրաժեշտ է ներկայացնել նաև կարծիք հոդվածի մասին, համապատասխան ամբիոնի կամ գիտական կազմակերպության երաշխավորությունը:
10. Հոդվածները, կարծիքներն ու երաշխավորություններն ընդունվում են ԳՊՀ էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեներով.

E- mail: info@gsu.am, infogsu@mail.ru

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝
(0-60) 46-02-01, (0-60) 46-04-03, (0-264) 2-57-75:

Շնորհակալություն համագործակցության համար:

ԳՊՀ գիտական պարբերականի խմբագրական խորհուրդ